



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 18 ՄԱՐՏ, 2024

ՏԵՐՈՒՍԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս քու. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 58

ԱՍՏՈՒԱԾ, ՊԱՏԺԷ ԱՄԲԱՐԻՇՏՆԵՐԸ

Արդար վճիռ կ'արձակէ՞ք, ով իշխողներ,
ուղիղ դափաստան կ'ընէ՞ք մարդոց:
Ոչ: Ձեր սրտին մէջ կը խորհիք՝
թէ ինչ անիրաւութիւն կրնաք ընել աշխարհի վրայ.
Թէ ինչ բռնութիւն կրնան գործել ձեր ձեռքերը:
Ամբարիշտները իրենց ծնունդէն իսկ խոփորած են.
Ծնելէ իսկ առաջ մոլորած ու սրախօս:
Անոնց թոյնը օձի թոյնի պէս է,
եւ իրենց ականջը փակած են խուլ օձի պէս,
որ չի լսեր թովիչներուն նուագը,
ինչքան ալ վարպետ ըլլայ թովիչը:
Ով Աստուած, փշրէ անոնց ակնքները իրենց բերնին մէջ,
կոտորէ առիւծի կորիւններուն ժանիքները, Տէր:
Թող շոգիանան ջուրերու պէս, որոնք կը հոսին,
կոտորէ անոնց նեփերը եւ ճգմէ զանոնք:
Թող խիստնջի պէս՝ հալին իրենց քալած արեւն,
վիժած ծնունդի մը պէս՝ թող արեւ չտեսնեն:
Նախքան փուշերուն կայծային փակ այրիւր,
դալար թէ չոր՝ փարփոյնէ զանոնք:
Արդարը պիտի ուրախանայ,
երբ Աստուծոյ վրէժխնդրութիւնը տեսնէ.
Իր ուրքերը պիտի լուայ ամբարիշտներուն արիւնին մէջ:
Եւ ամէն մարդ պիտի ըսէ.-
«Արդարեւ, արդարը իր վարձապարտութիւնը ունի.
արդարեւ Աստուած մը կայ, որ կը դատէ աշխարհը»:

ՇԱՐՄԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենաստուբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ թո՛ղ հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց-
եւ ողորմեա՛ թո՛ղ արարածոց եւ ինձ բազմամեղիս:



ԱՍՏՈՒԱԾ, ՊԱՏԺԷ ԱՍԲԱՐԻՇՏՆԵՐԸ

Դաւիթ իր վիճակին մէջ կու գայ այսպիսի արքայայարութիւն ունենալու: Այս արքայայարութիւնը կու գայ ցոյց տալու, ու Դաւիթի օրերէն սկսեալ մինչեւ այսօր փակաւին նոյն աղաղակն է որ կ'աղաղակենք, նոյն բանն է որ կ'ըսենք.- «Եթէ Աստուած մը կայ, ինչո՞ւ արդեօք այս բոլոր բաներուն վերջ չի դներ»: Բայց ահա, Դաւիթ իր այս աղօթքի աւարտին արդէն իսկ կ'աւարտուածի պատկերով կը վստահեցնէ թէ արդարը իր վարձատրութիւնը պիտի ունենայ, եւ իրօք Աստուած մը կայ, որ կը դարձնէ աշխարհը:

Սկսելու համար, այսօր երբ շուկայ կ'երթանք գնում ընելու, մեր մտքին մէջ ունինք որ արդարութեամբ վճառում ընենք: Պիտի չուզենք որ մարդիկ մեզ խափեն: Եւ կամ պիտի չուզենք որ մարդիկ մեզ անտեղի գրպարտեն: Տակաւին, այսօր ի քեզ մեր շուրջը կ'աւարտուած իրադարձութիւններուն, քանի-քանի անգամներ ունեցած ենք պահեր արքայայարուելու թէ այս ինչ անիրաւ աշխարհի մէջ կ'ապրինք, ո՞ր է արդարութիւն: Ընդհակառակը մարդիկ կը կոտորուին, իրաւունքներ կը խլուին, մարդիկ կը բռնաբարուին, երեխաներ կը ծախուին, ամէն քրտակի անիրաւութիւն տեղի կ'ունենայ: Կու գանք այն եզրակացութեան կարծէք եւ ըսելու երեւի աշխարհը ասանկ եկած ու ասանկ ալ կ'երթայ: Ահա յուսահատութեան վիճակ մըն է որ կը տիրէ, բայց Դաւիթ իր աղօթքով կու գայ եւ կը վստահեցնէ որ այդպէս չէ պարագան: Եւ եթէ հարցնենք այս բոլորը ինչո՞ւ այսպէս են, որովհետեւ մեղքը աշխարհ եկաւ Ադամի անհնազանդութեան պարճառով: Չմոռնանք, հոն ուր որ մեղք կայ, հոն նաեւ կայ անարդարութիւն: Բայց սա չի յուսահատեցնէր, ու պէտք չէ յուսահատեցնէր, որովհետեւ աւարտին Աստուած է որ իւրաքանչիւրին իր գործերուն համաձայն հատուցում պիտի ընէ: Դաւիթ ալ նոյն վիճակին մէջ, հարց կու տայ թէ ո՞ր է արդարութիւն, բայց ան կը դիմէ Աստուծոյ, որովհետեւ արդարութիւնը մարդը ինք չի կրնար բերել, որովհետեւ մեղաւոր է, ուստի եթէ արդարութիւն կ'ուզենք, ինչպէս Դաւիթը ինք, ապա կ'աղօթենք որ Աստուած Ինք բերէ այդ արդարութիւնը: Մենք միայն կրնանք խնդրել, քննարկել արդարութիւն, բայց չենք կրնար հաստատել արդարութիւն: Իսկ եթէ կը կարծենք որ արդարութիւն կրնանք բերել, այդ ալ կամ ժամանակաւոր, կամ խաբուսիկ: Ըշմարիտ արդարութիւնը միայն Աստուած Ինք կրնայ բերել: Հիմա անցնինք հատուածին:

Դաւիթ նկատի առած իր վիճակը, որմէ կ'անցնի, առաջին իսկ արքայայարութեամբ հարցում մըն է որ կը հարցնէ Դաւիթ իշխողներուն, թէ «Արդար վճիռ կ'արձակէ՞ք, ուղիղ դատաստան կ'ընէ՞ք»: Պատասխանը, ոչ: Դաւիթ չսպասէր պատասխանի, այլ՝ ինք իսկ պատասխանը կու տայ այդ հարցումին, որովհետեւ այդպէս կը քննէ արդէն որ իշխողները արդար վճիռ չեն արձակեր, ուղիղ դատաստան չեն ըներ: Տակաւին, կը շարունակէ ըսելով. ոչ թէ միայն չեն ըներ արդարութիւն, այլ՝ կը մտածեն ինչ ընեն եւ ինչպէս ընեն բռնութիւն եւ անիրաւութիւն աշխարհի վրայ այնքան արեւն որ կան: Առաջին իսկ առիթով խօսքը կը վերաբերի Սաւուդին: Մէկ բան որոշ է, որ սակայն իշխողները կ'անտեսեն եւ կ'անգիտանան, թէ իրենք ուրիշ բան չեն եթէ ոչ Աստուծոյ ներկայացուցիչը երկրի վրայ: Ուստի իբրեւ այդպիսին, անոնց պարտականութիւնը արդարութիւն ընել է, իրաւունք պաշտպանել է, եւ ոչ թէ հակառակը, բայց ցաւօք սրտի իշխողը, ղեկավարը այնպէս մը կը կարծէ, թէ ինքն է «Տէրն» ու «Արարիչը» այս աշխարհին, եւ ուրեմն ինչ որ կ'ուզէ ընել այդ կ'ընէ: Սակայն Աստուածաշունչ Մատեանը իր օրինակներով մեզ կը սորվեցնէ թէ այս աշխարհի Տէրն ու Արարիչը Աստուած Ինք է, եւ ամէն ինչ Իրմով պայմանաւորուած է: Այո, ժամանակաւորապէս մարդը, եւ այս պարագային ղեկավարը կ'իշխէ, սակայն կը կրկնեմ ժամանակաւորապէս, որովհետեւ մնայուն չէ իր կարգավիճակը: Յիշենք Նաբուգոդոնոսոր թագաւորը, որուն անունը սարսափ կը պարճառէր, սակայն երագով մը սարսափահար ինք արթնցաւ, եւ Դանիէլ պարմեց անոր քետած երագը եւ քուտաւ այդ երագին բացարձակութիւնը ըսելով, թէ քու այդ ամբողջ ունեցած գործութիւնը, ու շինած թագաւորութիւնը մէկ հարուածով պիտի կործանի: Փոխանակ ըլլալու Աստուծոյ ներկայացուցիչը, եւ իբրեւ այդպիսին առաջնորդելու երկիրը, քաղաքը կամ քուտեալ պետութիւնը, հակառակն է որ կ'ընեն, եւ աւելին կ'ուզեն ընել: Դաւիթ ուղղակիօրէն իշխողներուն չի խօսիր, այլ աղօթքի ճամբով Աստուծոյ կը դիմէ եւ ապա կը սպասէ Աստուծոյ արդար դատաստանին: Հերաբրքրական է, պատկերաւոր ձեւով, որ Դաւիթ աղօթքի ճամբով Աստուծոյ առջեւ կը բերէ այդ անձերը, ինչպէս դատարանի առջեւ պիտի գային երկու հոգիներ: Սակայն այնպիսի վստահութեամբ որ Աստուած կը լսէ ու պիտի արդարութեամբ դարձնէ եւ հատուցէ: Միթէ մենք ամէն անգամ երբ Տէր ողորմեա աղօթք կը բարձրացնենք ի՞նչ կ'ըսենք, քուտ աշխարհիս խաղաղութիւն: Այն յուսով եւ վստահութեամբ որ Տէրը

պիտի փայ այդ խաղաղութիւնը: Ինչպէս երբ կ'աղօթենք փերունական աղօթքը, թող գայ արքայութիւնը, թող կարարուի կամքդ ինչպէս երկնքի մէջ նոյնպէս ալ երկրի վրայ:

3-5 հմր Դաւիթ կը ներկայացնէ թէ ամբարիշտները իրենց ծնունդէն իսկ խոփորած են, ծնելէ իսկ առաջ մոլորած են ու սրախօս: Արքայայարութիւն մը, որ մեզ կը յիշեցնէ Աստուծոյ խօսքը Ծննդոց գրքին մէջ երբ ջրհեղեղէն յետոյ Աստուած կ'ըսէ Նոյին, «Իմ Հոգիս այլեւս մարդու վրայ պիտի չըլլայ, որովհետեւ մարդը իր ծնունդէն չար է», խոփորած է, մոլորած ու սրախօս: Խորքին մէջ խօսքը կը վերաբերի մեզմէ իւրաքանչիւրին, այնքան արեւն որ Քրիստոսը չենք ճանչցած, որովհետեւ միայն Քրիստոսով է որ կրնանք այդ մոլորուած ու խոփորած վիճակէն դուրս գալու եւ նորոգուելու: Պօղոս Առաքեալ նոյնը պիտի արքայայարուի ըսելով, բոլորս ալ մեղքի լուծին փակն էինք, ու փակաւին կրնանք մնալ եթէ երբեք Յիսուս Քրիստոսը չընդունինք իբրեւ Տէր եւ Փրկիչ: Դաւիթ նաեւ պատկերով ձեռով կը ներկայացնէ ամբարիշտներուն նկարագիրը, անոնց թոյնը օձի թոյնի պէս, այլ խօսքով սպաննող, ինչպէս օձին թոյնը երբ խայթէ կը սպաննէ: Անոնց ականջները փակած են՝ խուլ օձի պէս, որ չի լսեր թովիչներուն նուագը, թովիչը այն անձն է որ օձին կը նուագէ, եւ օձն ալ կը խաղայ: Այս պարագային ականջները խուլ չեն, այլ իրենք փակած են որպէսզի չսեն Աստուծոյ ձայնը որ զիրենք կը կանչէ ապաշխարութեան:

6-9 հմր քիչ մը փարօրինակ կրնայ թուիլ, թէ արդէօք կարելի է այսպիսի արքայայարութիւն ունենալ եւ այդ ալ արձանագրուի Աստուածաշունչին մէջ: Ասկէ առաջ ըսած էին, որ Դաւիթ, կամ Դաւիթի նման նաեւ մենք յաճախ կրնանք այսպիսի արքայայարութիւններ ունենալ, եւ սա մարդկային ներաշխարհին պռոթկումն է ի փես անիրաւութեան: Այսպէս եւս պատկերով կերպով կը ներկայացնէ անոնց նկարագիրը, անկռաները որոնք կը պարառեն, թող որ փշրուին իրենց բերաններուն մէջ: Անոնց ժանիքներ կը նմանցնէ առիծի կորիւններուն, թող որ կոտորուի: Զուրերու նման թող որ շոգիանան, եւ անոնց նետերը կոտորուի ու ճզմէ: Դաւիթ նաեւ կը նմանցէ որ խխունջի պէս հալին քալած ժամանակ վիժած ծնունդի պէս արեւ չրեսնեն, եւ թող ցիր ու ցան ընէ զանոնք: Այս բոլոր նկարագրութիւններուն մէջ, Դաւիթի խնդրանքը, որպէսզի անոնք անվնաս ըլլան: Ինչպէս օրինակ առիծը, որ պարառող ու բզկտող է, բայց երբ անոր ակռաները փշուռած են, անվնաս է:

10-11 հմրով Դաւիթ կը ներկայացնէ որ աւարտին արդարները պիտի ուրախանան երբ փեսնեն Աստուծոյ վրէժնորութիւնը: Վրէժնորութիւն մը, որուն մասին Աստուած քանիցս ըսած էր Իմն է վրէժնորութիւնը: Ես է որ պիտի հարուցանեմ: Ահա թէ ինչու Աստուծոյ է որ կը յանձնենք մեր դատը, որպէսզի Ինք արդարութեամբ դատէ աշխարհը: Մէկ այլ ուրիշ արքայայարութիւն մը որ կ'ընէ Դաւիթ ըսելով. «Իր ոտքերը պիտի լուայ ամբարիշտներուն արիւնին մէջ»: Հերաքրքրական է, որ ո՛վ է լուացողը, արդարը կամ թէ Աստուած: Եւ ամէն մարդ պիտի ըսէ. «Իրաւ արդարը իր վարձաբարութիւնը ունի: Իրաւ Աստուած մը կայ եղեր, որ կը դատէ աշխարհը»: Ուրեմն մեր կարծածին պէս չէ եղեր: Եւ եթէ այդպիսին է, ուրեմն ըստ այնմ մտածենք: Եթէ ամբարիշտներու խուճիկն կը պարկանինք Աստուած պիտի գայ դատելու, իսկ եթէ արդարներու խուճիկն կը պարկանինք չնեղուինք եւ ջուսահապինք, որովհետեւ Աստուած արդար վարձաբարութիւն պիտի փայ իւրաքանչիւրին: Այս բոլորը Աստուած Ինք յանձն առաւ Իր Որդին, մեր Տէրն ու Փրկիչ Յիսուս Քրիստոսը աշխարհի դրկելով, որ անարդար կերպով խաչուեցաւ, եւ հիմա Ինք գիտէ ինչ կը նշանակէ անարդարօրէն հալածուիլ, ծեծուիլ, անարգուիլ, եւ սակայն՝ Հայրն Աստուած զԻնք մեռելներէն յարուցանեց եւ ամէն իշխանութիւն Որդիին փուրս դարելու համար աշխարհը: Եզրակացութիւն, աղօթենք վստահութեամբ, հաւաքով, ու մանաւանդ՝ առանց ձանձրանալու, որպէսզի Աստուած լսէ ու պարասխանէ եւ վերջ դնէ անարդարութեան եւ արդարութիւնը հասարարէ: